

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Գաղափարական, Գիտական

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻՒ 38

Գ. ՇՐՋԱՆ

21 ՍԵՊՏԵՄԲ. 1902

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիս շաբաթաբերի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար «*Massis*»-ն էր. եւ գաւառներուն համար Յիսուս ղշ., կանխիկ վճարելի: Արտատպական 12 ֆրանկ կաւ 5 տուրքի: Թղթաստրական ծախքը խաբարդրական վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն լրնջուելուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին առէն աւետի մէկէն: Մասիս հրապարակ կ'ելլէ առէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է խկոյն իմացնեն խաբարդրական: Ժամանակ անցնելի վերջ աշխատեալ առարկայքները նկատդրութեան չեն առնուիր:

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

Ձեռքի կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

Հարցէ

درعليه ده آغوب ماطيوسيان مطبعه سنده «ماسيس» غزه سى اداره سنده

ԽՐԱԳՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»-Ի

Տնփարակ Յ. Մատթէոսեան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Rédaction de la Revue MASSIS

Imprimerie H. Matteosian

CONSTANTINOPLE

Գրասուն ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ, 60 Էսկի-Չապքիե Չասսեի, 60

Հրասարակուեցաւ

ՀՐԱՆՏ Ս. ԽԱՆՃԵԱՆԻ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ

190 Էջ, 16աւալ, զին 5 դրշ.

Զարդարուած բաղմաթիւ լուսաւոր պատկերներով : Անհրաժեշտ ամէն զպրոցականի եւ վաճառականի :

Նոյն հեղինակին՝

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, ՄԻՋԻՆ ԴԱՍԵՆԹԱՅԲ

240 Էջ, պտկորդ. զին 5 դրշ.

Եւրոպական ամենէն համբաւուոր եւ նորագոյն գործերու հետեւողութեամբ :

Սոյն երկու գործերու իւրաքանչիւրէն գաւառի ուսուցիչներու նմոյշ կը զրկուի 50 փտրայի զրոշմաթուղթի փոխարէն :

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 200

Կալաթա-Սեբասի Լիսէին գեմ

ԴԵ. ՆԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանուխէն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

ԲԵ. ԴԵ. ՈՐ. օրերը 6 Էն մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամագրութեամբ

ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 15

Բացի սովորական ներքին հիւանդութիւններէ՝ կը դարմանէ մասնաւորաբար, նոր մեթոտներով եւ խնամով, ստամոքսի, աղեաց, լիզակաւն ճարձակներու հիւանդութիւնները, ջղախեղ ճարձակները, զաղիական ախտերը (սիֆիլիս եւլն) եւ մտքի հիւանդութիւնները :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը :

ՊՐՈՒՍԱՅԻ ԽԱՎՈՒՆԵՐԸ

ԳՈՐԾԱԾԵՑԵՐ

ՊՐՈՒՍԱՅԻ ԽԱՎՈՒՆԵՐԸ

Եւրոպական.

ներէն առեկի ԴԻՄԱՑԿՈՒՆ ըլլալուն ամբողջ չկայ, հետեւապէս առեկի ԱԺԱՆ ԵՆ :

Ս. ՄԱՐՏԻԿԵԱՆ, ԵՒ ՈՐԴԻՈՑ

ՊՐՈՒՍԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒ

ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Լաւագոյնը ըլլալու համար կը վայելի 35 տարիէ ի վեր :

Դիմել՝

206-29, Նեմի Զարբ, Մահմուտ Փաւա, Կ.Պոլիս



ՌՕՍԻԱ — ROSSIA



Ս.ՊԱՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆԲ, ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆԲ, ԱՐԿԱԾԲ

Ընկերութեան գրամաղուիք, ամբողջապէս վճարուած	10,667,667 ֆրանք
1901 տարուայ մէջ գանձուած ապահովագրեանք ու անկուս	54,000,000 »
Երախաւորութեան գումար	122,000,000 »
Ապահովագրեալներուն վճարուած գումար	249,400,000 »

Կեդրոնատեղի, Ղալաթիոյ ֆարափին վայ, Մահմուտ հին տեղը

Ընդհ. Քննիչ
Ա. ՀԻՒՐՄԻԻԶ

Ընդհ. Գործակալ
ԹԷՈՏՈՐ ԱԷԲԵԼԵ

ՄԱՍԻՆ

51^{րդ} ՏԱՐԻ

— 21 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1902 —

ԹԻԻ 38

ԲՈՎՍՆԴԱՆԻԹԻԻՆ

Զօրի մահուան առթիւ (Նմրագրական) Յ. Ս. : — Էմիլ Զօլա. Գ. ԶՕՀԲԱՊ : — Սիրայս յօրեկ-
նամբ. ԳՐԻԶԵՆՖԷՄ : — Վոդովրոյային սխերգներ. Հաաքեց Վ. ԳՈՒՅՈՒՄՃԵՍԱՆ : — Հո-
գին (Նորավեպ) ՓԱՅԼԱՆ : — Երուսաղէմի գործեր : — Յուլեւսիեր :

ԶՕԼԱԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻԻ

Օրուն լուրը, բովանդակ դրական
աղբարհին համար, էմիլ Զօլաի մահ-
ուն լուրն է :

Մեծ վիպասանը, իր տաղանդին
բովանդակ ու ամենէն վայելուն շրջանին
մէջ, երբ հոյակապ երկասիրութեան մը
պարտաւորութեամբ կ'աշխատէր, —
որուն առաջին մասերը կը կազմէին Fé-
condité և Le Travail, — զո՛հ կ'երթայ
հասարակ արկածի մը, — վառարունին
կազմէն շնորհեղձ վար իյնալով անկողինէն :
Երբեք չէր դադարէր, որուն կեանքը համակ
պայքար մը եղած էր, կը զգենառնի
բանկարծ, ամբողջանքերու մէջ բա-
նալ դարձաւորի վախճան մը գտնելով :

Երեքշաբթիէն ի վեր, հեռագիրները
բովանդակար կը բերեն մանրամասնու-
թիւնները Զօլաի մահուն պարագանե-
րուն և անոր առաջ բերած ցաւազին
ու ցնցող տարաւորութեանը, մասնաւո-
րապէս Բարիլի մէջ :

Բնապաշտ գպրոցին պէտք, մեր մէջ,
զբաղէա ու դրասէր դատասկարդերուն
պայն ծանօթ էր կատարելապէս, այդ
շնորհակէն դուրս չատ քիչ կարգացում

ըլլալով իր գործերը և, ցաւալի է խոս-
տովանիլ, անոր ոչ մէկ հատորը թարգ-
մանաւ ըլլալով տախալին հայերէնի :
Հատկապէս հատուածներ, քանի մը վի-
պական միայն, թերթերու մէջ ցանցըն-
ուած . ահա՛ բարձր : Ու, զարմանալի
հակադրութեամբ մը, Զօլան մէկը եղած
է այն նշանաւոր օտար հեղինակներէն
որոնց վրայ ամենէն աւելի դրած՝ վի-
ճարանած են մեր գրագէտներն ու հրա-
պարակագիրները : Յամուռ ու խուշ
հակադրութիւն մը, զոր մեր գրողներէն
ամենը կը մոռցանէին անոր դէմ՝ առիթ
տուած է հակադրեցութեան մը Զօլան
գործերը խորապէս ճանչցած, ուսումնա-
սիրած գրողներուն՝ իր իսկութեան մէջ
ներկայացնելու, մեր հասարակութեան,
փրանապի մեծ իմաստասէրը ու մեծ վի-
պասանը :

Ամենէն աւելի Մաւիւսի մէջ է, —
իննքուանական թուականներու շարքիւ-
թեամբ Մաւիւսներուն մէջ, — ուր յա-
ջարդական յօդուածներ երեւցած են,
Բնապաշտ վեպին ու Բնապաշտ Դպրո-
ցին ինչ ըլլալը ճանչցնող : Այդ գրուածք-

ները իրենց ազգեցութիւնը ունեցան միաբերու վրայ — անոնց որոնք առանց Զօլան կարգացած ըլլալու, ուրիշներու խօսքէն կը դատէին — և մինչեւ մէկ աստիճան բարեշրջութիւն մը առաջ բերին : Ամէնէն պարզ ընթերցողն ալ հասկըցաւ թէ Բնագաշտ Վէպ ըստածը ընդհանրութիւն մըն է բնութեան, մարդերու և իրերու վրայ : Իր նպատակը հանձարեղ առատակը մը հնարել ու զոյն ընդլայնել չէ, այլ իրական կեանքը, ապրուած կեանքը միայն պատկերացնել ու վերլուծել, առանց ծածկելու անոր յուսի ու տգեղ կողմերը :

Ժամանակին հետ, այդ գրական պայքարներն ալ կորնցուցին իրենց ուժը . և հիմակ, անոնց յիշատակը միայն կը մնայ :

Զօլային մահը դուժող առաջին հեռագիրներուն ազատութեան տակ, կը քրքրեմ այդ յիշատակները, — դեղնած, մաշած էջեր, թերթերու հաւաքածոներ, — ուր կը հանդէսն, անշարժ ու յաւիտենական քունի մը մէջ կարծես, օրը օրին գրուածներ՝ խանդով, եռանդով կատարուած մոտաւորական արտադրութիւններ, գրական հարցերու շուրջը, և Զօլայի անունին ու գործերուն շուրջը մասնաւորապէս :

Այդ գրական յիշատակներէն էջ մը կենդանացնելու համար Զօլայի մահուան տխուր առիթով, վեր կ'առնեմ անոնցմէ ամէնէն գեղեցիկներէն մէկը, — Գ. Զօհրապի յօդուածը՝ 1893 Վերտրուար 27 ի Մաւիսին մէջ հրատարակուած — : Աղուոր գրուածք մը երբեք չհինաւոր . և Մաւիսի այսօրուան ընթերցողները նոյն հաճոյքով ու հետաքրքրութեամբ պիտի կարդան՝ որով կարգաց-

ուած է, ութը տարի առաջ, տաղանդաւոր հայ գրողէական գնահատականը փրանսացի մեծանուն վիպասանին վրայ :

Տ. Ա.

ԷՄԻԼ ԶՕԼԱ

Մշտնջենական պարտեալ մը փրանսական Ակադեմիայէն, ու մշտնջենական յաղթող մը փրանսական գրականութեան մէջ .

Իր անունին ճակատագիրն է, գրական մեծ անուններու պէս, տարուբերիլ ամենաշեղ դուռտաքէ մինչեւ ամենախիստ դատաւիտութիւն, ալէկոծիկ լատար մը պէս բարձրագոյն գաղափրները ելլել ու ամենախոր վիճելը իջնել :

Իր բարեկամները ու հակառակորդները հաւասար կատաղութեամբ կը պաշտպանեն ու կը դատապարտեն իր գործը, բայց ո՛չ ոք, ո՛չ սք կը ժխտէ իր գրական մեծ տաղանքը :

Տիառօյէն, Սթանաւէն, Պալպաքէն, Յիւպէտէն եւքը՝ Զօլան այսօր անվիճելի դուռն է այն դպրոցին որ գրականութեան մէջ կեդիքը, ստույթները, խորհրդները վերցնելու հարկը կը դաւանի :

Գրականութիւնը՝ որ Գիտութեան մասն է՝ չի կրնար անոր հակառակօրոյդ ըլլալ . այս է իր համոզումը . հիմայ միւսնոյն գաղափարը չէ՞ որ Գեղարուեստին համար ալ կը յայանուի ամենուրեք . Վակների յաջողութեան գաղափրին ալ Զոյնարտութեան մէջ մեծ վարպետ մը ըլլալուն մէջը չէ՞ միթէ :

Ճշմարտութիւնը՝ ուրեմն՝ ամէն բանէ առաջ . մանուշակ թէ ամէն բանէ վեր . անձ գրականութեան արդի բանաձեւը որ Զօլայինն է :

* * *

Ըսին որ կեանքի այն հոյակապ ուսումնասիրութիւնը որ Ռուկօն-Մաքսոններու չարքովը կը մարմնանայ, իր նկարամու ճշգրտագրութեամբը վիպասակար ու վրանգաւոր բան մը ունէր հանրային բարոյականութեան համար :

Ամէն անոնք որ մոլութեան զէմ մաք-
ած են, վար առնելով անոր կեղծիքի դի-
մելը, ամենքն ալ այս ամբաստանութեան
նքարկուած են: Հա՞րկ էր ուրեմն մոռնալ
որ մոլութիւնը գոյութիւն ունի կամ ցոյց տալ
զոյն, Թէոյեէին պէս, այն նուրը չպարսկերով
գիղցկացած որ հրապուրիչ ընծայեն զինքը
միտրձ աչքերու:

Այսպէս չէ խորհած Փրանսացի մեծ վի-
գաղիքը, եւ պարկեշտասուն Անգլիան վերջերս
իր մէկ մեծ գրադէտին բերնով, որ Վէրնոն
կը կը ստորագրէ, ճանչցած է որ Զօլայի ձեռ-
նարկած գրական վաստակը էապէս բարոյա-
ցոյցիչ հանգամանք մը ունի:

Իր վէպերուն մէջ Դոթադուլթիւնը ու Ան-
իլթը ուսումնասիրած է այս մեծ գրագէտը
նախնիքներու թողովով Բազզը եւ Յաջողութիւնը
զանազանելու դիրքին դործը:

Եւալթին ու տիդմին մէջ ռահվիրայ մը
կըսած է, իր ներողամիտ իմաստասիրութեան
ըջը ցրուելով հոն ալ: Զուռնքի ու սոս-
թիւն աշխարհին այս մեծ խուզարկուն՝ շա-
ւիկան, ապշեցուցիչ ու զմայելի բաներ գտած
է այն տեղ. ու տիրող ընդհանուր փտտուսին
կայ առանց յուսահատելու, նոր հաւատք
ի, նոր ոյժ մը քաղած է անկից վերկեն-
դանութեան, մաքուր եւ անկեղծ կեանքի մը
հարումը այդ աղջամուղջէն:

Այս է ահա իր եզրակացութիւնը որ սըր-
ապաղիութիւն կուտայ ընթերցողին. իր վի-
պոլոթի գործողութիւնը, որ շարաւի ու թա-
նիքի գարշանքը ունի, կենդանութեան
ըջթէ վերակենդանութեան դործ մըն է:

* * *

Ռուկոն-Մաքառներու շարքին մէջ ամենքը
համաձայն են Ժեռլինալը իր գլուխ գործոցը
համարելու մասին: Կարո՞ղ եմ արդեօք ես,
այդ հրապարակագիր մը, իր նուազ համա-
ռուր մէկ հատորը նախագասելու: Եւ սա-
խան առանց քաշուելու պիտի ըսեմ որ ամէ-
նէն գերազանցը կը համարիմ իր Գործը
«L'oeuvre», որ կարծես իր անձին վրայ գըր-
ած է, իր ճակատագրին վրայ մտածուած երկ
նէն է:

Քօտի ու Ֆոթըստի անունները ընկերա-

կան պայմանագրութեանց հետեւանօք ստեղ-
ծուած երկու սոսիս գլուխներու անունները
պիտի մնան:

* * *

Իր հռչակաւոր վէպերու շարքին մէջ Ժեռ-
միւնալէն յետոյ, որ հանքերու մէջ աշխատող-
ներու գոհողութեան ու տանջանքի կեանքը
կը ներկայացնէ, կուգայ Ասօմուալը, որ դու-
ծաւորներու կենցաղը կը նկարագրէ, արեւոյտ-
ութեամբ շաղախուած, փճացած գոյութիւն.
Երկիրը՝ որ հողագործներու նիւթապաշտ ու
անասնաքանդ ոգին կը մերկացնէ: Բօ Պոլը՝
սրուն մէջ քաղքենիներու արտաքին չէնքին
ու չնորհքին տակ պահուած ու բարոյական
նիւթումը մատնանիշ կ'ըլլայ: Դրաւը՝ որ շա-
հապէսներու բարքը կը պատկերացնէ իր խա-
ղախութեանէ ձեւացած ճարպիկութեան ու
ձեռներեցութեան մէջ. Նաւան՝ որ անձնա-
մատոյց կնոջ մը՝ ամէն գասակարգի անհատ-
ներու վրայ ի դործ գրած տարփական նախ-
ճիրներու պատմութիւնն է եւ որ մածնող շա-
ղախին պէս միեւնոյն չէնքին բոլոր քարերը
ու մասունքը իրարու կը միացնէ՝ միեւնոյն
ապականութեան խմորովը. եւ ամէնէն ետքը
Քայխալուը՝ Ֆրանսայի անակնկալ պարտու-
թիւնը 1872ին:

Այս համառօտ թուումն ընել, մէկիկ մէ-
կիկ ճշդելով իր գործերուն բարձր նշանակու-
թիւնը ու իմաստասիրական կապը որ բոլորը
իրարու կը միացնէ, չի՞ բաւեր հաստատելու
համար թէ այս անբաղդատելի վիպագիրը մեծ
բարոյագէտ մըն է նաեւ, թէ որքան քիչ
ճանչցած են Զօլան անոնք որ ապականիչ ու
վատնպաւոր բան մը կը համարին անոր գրա-
կան վաստակը: Ասոնք են ահա իր Ռուկոն-
Մաքառներու շարքին ամէնէն փայլուն գո-
հաքները:

Այս հսկայի աշխատութիւնէն գտա՞ իմիւր
Զօլա նշանաւոր է իր գրական քրիզիքներովը
որոնց առաջինը «Իմ Ատելութիւններս» յոր-
ջորջած է:

* * *

Այս անուանի գրողէտին յատկանիշը,
որով իր մեծ դէմքը կը ճշդուի ժամանակա-
կից փրանսայի այնքան նշանաւոր գրողներու
մէջ, իր ոճին կորովն է, նկարագրութեանց

ապշեցուցիչ ճշգրտութիւնը , պատկերներու ճշտութիւնը եւ ընդարձակութիւնը :

Էմիլ Զօլա անհատի վիպագիրը չէ , այլ մարդկային ահադին կոյտերու , ամբողջ դասակարգերու :

Ինքն է միայն որ դտած է անհամար բազմութիւն մը մէկանց , մէկ հատորի մը մէջ երեւան հանելու , ապրեցնելու ու երկարածիդ պատմութեան տեւողութեան միջոցին՝ ամենքն ալ աչքի առջեւ պահելու դժուարին խնդրոյն լուծուած :

Իր ամէն գործերուն մէջ հարիւրաւոր արարածներ են որ կը շարժին , կ'ապրին , կը խօսին . ընկերութեան մէկ կարեւոր մասն է որ տեսարանին վրայ կուգայ եւ կը կենայ հոն մինչեւ որ վարագոյրը իջնայ :

Իր իմաստասիրութիւնը կեանքի պայքարներու գիտակից մարդու ներողամտութեամբը առգործած է . այս գրագէտը գիտէ թէ որքան քիչերու վերապահուած է ուրիշի գէմ աններող ու խտապահանջ ըլլալու ահարկու իրաւունքը :

* * *

Էմիլ Զօլա երկրաչափի մը գաւակն է . իր հօրը վերահաս մահը , ժառանգական դատերու մէջ՝ հայրենի հարստութեան փճացումը հարկադրած են զինքը կիսկոտար թողուլ իր ուսումը :

Իր երկտասարդութեան տարիները՝ Բարիզի մէջ՝ սեւ չքաւորութեան , կէս-անօթութեան տարիներ եղած են :

Յետոյ սկսած է ապրուստը ճարել Հաշիթի հռչակաւոր դրամաճասին քով աշխատելով իրրեւ պաշտօնեայ , ուրկէ հրապարակագրութեան մէջ թեւակոխած է Ֆիկսոթի մէջ ընդունուելով իրրեւ քննադատ եւ որուն էջերուն մէջ պարզած է իր բնադաշտ գրողէի համոզումները որոնք այնքան սխալ տառելութիւն յարուցած են իր շուրջը եւ որոնք մինչեւ հիմա վառ կը մնան իրմէ հարուածեալներէ շաաներուն սրտին մէջ :

Անկէ վերջը իր գործերը ընդունելութիւն գտնել սկսած են , յաջողութիւնը իր ոտքը եկած է վերջապէս :

Զօլա մեծ համբաւ կը վայելէ մասնաւորապէս Ռուսիոյ մէջ ուր Ռուսական Հանդիսին

աշխատակցութեամբը հռչակուոր է . Ապա քէն իր յուզած բոլոր ընկերական մեծ հարցերը՝ օրուան խնդիրներ էին հոն եւ ընկերցողը չէր կրնար անտարբեր մնալ այս հրապարակագրին որ այնքան կարեկցութեամբ կը ճշգէր անտարբեր աշխարհի աչքին՝ անոր անծանօթ պահուած կեանքին պայմանները :

Մեծ վիպագիրը առանձնատէր ողի մըն է : Ընկերութենէ ու բազմութենէ կը խորշի՝ զբոքերու մէջ ամբոխի սիրտահար այս մարդը . իր բոլոր երազը եղած է առանձին ու անշուշտ զոյւթիւն մը :

Գ. ԶՕԼՐԱԳ

ԺԱՄԱՆՅԻ ԲԱԺԻՆ

ՄԻՐՈՅՍ ՅՈՐԵԼԵԱՆԸ

— օօօօ —

Քառորդ դար մը ! Կառակ չէ :

Կործնա դեռ երէկ էր սակոյն : Քառորդ հինգ տարիներ իրարու վրայ հեծեր են անդգալաբար , առանց աղմուկի :

Երբ այս առաւ , դիպուածով կը խառնարեկեմ խաւաքարաէ այն պղտիկ տուփը որ սէրերուս թանգարանն է , Louvre , British Museum , յանկարծ աչքիս կը դարնէ դռնաւոր թղթի քառածալ կտոր մը որ տալին անգամ սիրած մէկ աղջիկէս եկած է քնի :

« Դասը-գիւղ , 6 սեպտեմբեր 1877 . . » :

Այսօր ճիշդ քառորդ դար մը անկէջ ի վեր : Յորեկանը առաջին սիրոյս . . .

Ասանկ հանդիսաւոր օրուան մը մէջ , չի խորհրդածելու եւ ինքնամոխոխով շարժում մը չունենալու համար , մարգա կուլթաբէր քայէ չինուած ըլլալու է :

Ուստի խորհախորհուրդ եւ գաղափարայգ տուփը կ'առնեմ առջիս եւ կը սկսիմ մտածել :

Աս որքան մաղ , որքան մաղ :

Շատ մը բաներ կան այս տուփին մէջ . չորցած ծաղիկներ , լուսանկարներ , դռնաթափ ժապաւէններ , մէկ երկու թաղիկնակ , տանթէլի կտորուանքներ , կոճակներ , գնդաանգներ եւ առանց պէս խել մը առարկաներ :

ընդամենը ամենքն ալ . տիրող articleը
նախն հն սակայն , մաղերը . բոլորն ալ
սե , փունջ փունջ եղած եւ ամենքն ալ մէջ-
նայն կամ ծայրէն կապուած գոյնզգոյն ժա-
պուէններով :

Ի տես այս ամենուն , անդամ մը եւս կը
համոզուիմ թէ Արարչութիւնը ոչինչ չինած
է տանց հաշիւի՝ երբ այս տիեզերքը տծեց :

Եթէ այդքան երկայն մազեր զրած չըլլար
աղիկներուն զլխուն վրայ , անոնք ինչպէ՞ս
ըլլաի պիտի ելլէին արդեօք մէջ մէկ յիշատակ
նախքիւ համար ամէն անգամ մէկը սիրել-
եան :

Գիտէ՞ք մաքէս ի՞նչ կ'անցնի կտր , Քանի
որ յոբելեանը յորեկեան է , գէշ չըլլար եթէ
քանքնիկդամեայ հաշուեկիւրը չինեմ սի-
ւային յիշատակներուս :

Եթէ ոչ սրտիս՝ գոնէ զլխուս մէջ արձա-
նադուած , սպուած կը դանեմ սէրերուս
Յայր հաշիւը :

Ամէն յիշատակ իր բոյրը ունի եւ համով
թղթառակ վերջուշուններու տեսակը :

Իբրեւ խղճամիտ հաշուակալ՝ պէտք է ըսեմ
թէ Մայր Տոմարին մէջ կը գտնեմ տասնը-
մը ընթացիկ-հաշիւներ որոնց քանի մը
նաք դեռ աւակախ կը մնան :

Առաջին անգամ սիրած աղջիկս — ի՞նչ
տառաքան ունիմ՝ եղբւր այն ատեն — սեւ ու
լայնակ աղջիկ մըն է զոր եթէ , Աստուած
պարսպէ , այս օր նորէն սիրել ստիպուած
աղջիկ , tetanosէ պիտի բռնուէի , տարա-
ւոր չկայ :

Գաղտնիկանի սէր . գեղադրութեանը զար-
նած էի :

Ամբողջ յանցանքը Միւսիւ Միհրանինն
է . իրեն ո՞վ ըսաւ ցոյց տալ ինծի վիրժինին
նաքաղը ուր գլխաղիւնները իրարու ձեռք
նստած՝ հարսի պէս քով քովի շարուած կը
նային :

Առաջին մաղի փնջիկը անորն է :

Երկրորդ փունջէն սկսեալ մինչեւ տասնը-
մը երրորդ , Աստուած՝ վկայ , միաքս չէ թէ
նայն կը պատկանին :

Ամենքն ալ սեւ են եւ անուշ կը հոտին :

Աս զրական մասն է : Երեւակայականը
աւելի ճոխ է , հոգ մի՛ ընէք :

Կը կղպեմ սուսիք եւ քանարէիս վրայ
կ'երկնամ :

Մէկուկէս երկոտասնեակ աղջիկներու սիրտ
տուեր եմ հէ՞ , մինչեւ այսօր :

Ընտո՞ր չեմ մեռեր :

Տասնըութը հատ սիրունիի հետ գլուխ
ելլել , տասնըութը անգամ պատերազմի եր-
թալ կը նշանակէ :

Ամէն մէկը վէրք մը կը թողու սրտիդ
մէջ որ բարեբաղդաբար շուտ կը սպլանայ .
եթէ ասանկ չըլլար՝ աշխարհք բոբոտներով
կը լեցուէր :

Քանքնիկդ տարի տառաջ , սէրերը այսօր-
ուան պէս դիւրին բաներ չէին :

Աղջիկ մը գլխէ հանելու համար խաչը
կ'ելլէինք :

Այն ատենուան աղջիկներուն բարոյականը
ջիւղեքոյով շաղուռած էր , հիմակուանե-
րունը հազիւ թոշալով , Ծուռ մը կը փրբթի :

Երբեմնի աղջիկը ներս կը փախչէր , վա-
րագոյրին մէկ ձեղքէն քեզ կը նայէր եւ մօր-
կանը խաղար կուտար :

Հիմակուան աղջիկը մէկ վայրկեանի մէջ
կը հաւնի , կը հաւանի :

Կը կարծէք թէ կատակով եւ կամ խօս-
քով անցած են այդ քանքնիկդ տարիները ,
Ինչե՞ր , ինչեր չեն անցած գլխէս : Ո՛ր
մէկը պտամեմ :

Յուստիարգութիւններս մի ըսեմ , պա-
րանքներս թէ ցաւերս :

Ո՛հ , շատ են ասոնք , անհատնո՛ւմ , ա-
նսպառ :

Մառի անուն աղջիկ մը կը սիրէի — Մայր
հաշիւ , էջ 4րդ — որ վրաս հոգի կուտար :

Ասանկ բաներու կը հաւտայի այն ատեն :

— Եթէ ինծի չառնեա , եթէ զիս քեռէ
բաժնեն , կը հալիմ , թոքախտ կըլլամ , կը
մեռնիմ , կըսէր ու կը գրէր շարունակ :

Երեւակայեցէք որ այդ մեռնող , հառնող ,
դգայնիկ աղջիկը որ եւ է Գէսոյդ աղայի մը
կինը եղած է այսօր , այսինքն անկէց ի վեր
հինգ մանչ եւ երկու աղջիկ դաւակ ունի եւ
67 թիւ քօրսէ կը դնէ :

Հասնելէ ետքն ալ ասանկ հատնելու է
աղջիկ մը :

Ուրիշ մը :

— Քեզի հետ ըլլալ, վէպերու մէջ թաղուիլ, ոտանաւորներ յօրինել, ամէն գիշեր թատրոն երթալ, ես քեզի romanceներ երգեմ, դուն ինծի գրածներդ կարդաս, Ֆիկա-ռօն բերել տանք, իրիկունները Սըլանախ ճաշենք երբեմն եւ թէ կտրենանք, Բարիզ ալ երթանք. ահա, կ'ըսէր, երազս, միակ փափաքս. խոստացիր ինծի որ ուղածներս պիտի իրականանան, երգում ըրէ :

Այս ամէնը աղէկ չէ :

Բայց զարմանալին ըսեմ ձեզի, Այդ եթե-րային էակը, այդ նուրբ ազնիւ կուզէ՞ք որ վերջի վերջոյ Աֆրոն-Գարաշխարհ Կարս եր-թայ մարդու մը որ ութը օրը անգամ մը դուրպայ կը փոխէ . . .

Եկու մի՛ ճաթիր :

Երբորդ մը :

— Երգում ըրէ ինծի, mon gros loulou, որ հաւատարիմ պիտի մնաս միշտ, je serai toute à toi. Սա՛ ձեռքս պագ, encore, là, ա՛խ, qu'il est bon d'aimer, dis, aimes-tu ta petite Sofi ?

Տեսա՞ք ինչ տեսակ ըլլալը Սօֆիին :

Արդ, այդ խմորով չինուած, այդ կեր-պասէն ձեւուած Սօֆիս, այսօր . . . դաւա-ռային դիւղի մը տէքաէրին երէցկիներն է :

Հաւատալնիդ չի գար, չէ՞, բայց ի՞նչ կու-զէք, աս ասանկ է :

Այս ամէնը պատմութեան պղտիկ կող-մերն են :

Այդ տասնըութին հետ իյնալ ելլելու հա-մար ես գիտեմ ինչն'ը քաշած եմ :

Ասօնց երեսէն չորս հինգ անգամ մեռնե-լու մօտ հիւանդ եղած եմ . . . պաղ առնելէ, անգամ մը քիչ մնաց ծեծ պիտի ուտէի. կե-րած դրամներս ալ ուրիշ. 26,435 անգամ սուտ երգում հանած եմ եւ անգամ մըն ալ ծաղիկ հանեցի մէկ հատին եղբորմէն վարակ-ուած ըլլալով :

Անհամար թաշկինակներ տուած կամ կորսնցնուած եմ, տարիներով կէս գիշերէն առաջ չեմ քնացած. ամէն անգամ որ հաղ կըլլայի անոնք հազ կընէին՝ կարծելով թէ իրենց համար վերեւ կըլլամ կտր :

Մինչեւ թիւ 8ը սիրուհիս անխելքօրէն կը նիհարնայի, բան չէի ուտեր, տեսրակներով

ոտանաւոր գրած եմ : Երեք անգամ «Langage des Fleurs» անուն գիրքէն ծախու տած եմ, եւ ատերով գրամ տուած եմ լուսանկա-րիչ Ազատուլան Եզարաց :

Ձէր բաւեր որ գործէս կըլլայի, շատ ան-գամ ալ հարբուխ կըլլայի :

Կեանք էր ասիկայ :

Այդ զանաւթիւնները, հոգերը, վնաս-ները, տագնապները, ցաւերը եւ վիշտերը, յոգնութիւնները, տառապանքները, ախ ու վախերը, ի՞նչ արդիւնք ունեցան : Ոչինչ :

Մինակ սա գիտեմ որ այս օրուան օրս քայքայուած առողջութիւն մը ունիմ եւ սիրտ մը բեկտր-բեկտր :

Այդ տասնըութը աղջիկներէն ի՞նչ ան-ցած է ձեռքս :

Ոչինչ, ոչինչ, ոչինչ :

Նա՛, քիչ մնաց կը մոռնայի կոր : Հապա սա մազերը :

Քսանըհինգ տարի աշխատէ . . . 17½ տարւմ մազ ձեռք անցընելու համար : Գէշ գործ չէ :

Թերեւս այս պահուս այդ տասնըութէն ոչ մէկը վրաս կը մտածէ եւ դուցէ ողջ մնացած ըլլալուս վրայ ալ տեղեկութիւն չունին, ապերախտն'ըր :

Մինչեւ ե՞րբ այս մազերը պիտի պահեմ :

Une idée . . . ինչպէս կը բացադանչեն ֆրանսական բեմերուն վրայ :

Սիրոյս յորեղեանը արժանաւայել կերպով տօնիլու համար բան մը ընել կը մնայ ինծի :

Այդ ամբողջ մազերով չղթայ մը հիւսել տալ սափրիչիս :

Այսպէսով, թէ՛ վրէժս առած եւ թէ՛ շքե-թայ մը տուած կըլլամ ժամացոյցիս :

Միակ միւթարութիւնը զոր ունիմ, այն ալ սա է թէ սիրած բոլոր աղջիկներս շեւ մազեր ունէին. ապա թէ ոչ այս չղթան չէր հիւսուէր գիւրութեամբ :

Եւ ըսել թէ տասնըութը աղջկան զրու-պէտք է ժամացոյցի չղթայ մը չինկու հա-մար :

Կեանքին անուշ կողմերն են ասոնք :

ԳՐԻԶՈՆԵՐԻՄ

ՄԱՆՈՎՐԴԱՅԻՆ ՍԻՐԵՐԳՆԵՐ

Ա Ն Տ Ո Ւ Ն Ի

1.

Կուսիկ մը երկնից ի վար
Կու սիրէ ձկնական ի ծովուն .
Ուշ լուսիկը վար գալու ,
Ուշ ձկնական՝ ի վեր գնալու . . . :

2.

Հա ետ'ը , ես ինչո՞ւ կուլամ . —
Դուն կ'երթաս՝ ես մեն կու մնամ :
Լնեի շարէ շապիկ ,
Այա (1) փու անձող լնեի ,
Կամ հայրեւմեկ տիւրմէ՝
Այա փու բազկիկդ լնեի ,
Կամ լաճուռի շալ գօտի՝
Այա փու մեջքդ գրկիկ ,
Կամ ջուր , կամ նռան գիւնի՝
Այա փու խեհեհող լնեի .
Ետեհեհ ափեդ առնեի ,
Յաճնայլ լեզուդ պագնեի . . . :

3.

Մօրեկս ու մանկուքեկս՝
Ես ազապ աղջիկ չեմ պագեր .
Երեկ աղուռ մը պագի ,
Ան գացեր մօրկանն է գանգրսեր ,
Մարիկն հարցմունք արեր .
— Աս լուս երեսդ ո՞վ է արունք :
— Մարիկ , ես ասօր պախման գացի ,
Վարդին վուսն երեսս արունքից :
— Չորեքն ան վարդին վուսն ,
Չարունք փու լուս երեսդ :
— Մըքեր , մ'անիծեր , մարիկ ,
Դրացի կըլին (2) մը պագալ :

4.

— Եկե՛ք , փուն չիլիքն , նստի՛նք :
— Մենք շատ փուն ունիքն լնելու :
— Շատ առուն ու շատ գարուն
Տի պառկիքն , ա՛լ չի տ'ելլեքն :

Քունն երթայ՝ ալուռի կուգայ ,
Ետն երթայ՝ չաման կու կենայ : —
— Ես քեզի մի՛ննեք մի ունիմ .

Ան սերդ ու դարձի՝ ի տուն ,
Դարձի՛ւ եղի՛ր փոքրման
Չոր (3) չե եղեր օրիկդ ալ երկուք .

Օրիկդ ալ երկուք լնի ,

Կու սովիս ու շատ կու կենաս . . . :

ԿԱՐԻՆ

Հաւաքեց Վ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Սանասար. Վարժ.

(Շարունակելի)

Հ Ո Գ Ի Մ

(Ն Ո Ր Ա Վ Է Պ)

Մարգար ու Նեկտար աղալուծեանէ ի վեր
զրացի , խաղի ընկեր եւ զարոյցի ընկեր եղեր
էին իրարու . Նեկտարին ծնած տարին Իւս-
կիւտար փոխադրուած էին իրենք . Մարգար
2-3 տարեկան նիհար ու սիրուն տղայ մըն
էր . երկու ընտանիքները — բաւական բա-
րեկեցիկ երկուքն ալ — հիանալի կերպով
յարմարեր էին իրարու . աղալուծեանէ
շատ աւելի սերտ զրաջնուծին մը հաստատու-
ուած էր մէջերնին եւ այսպէսով Մարգար ու
Նեկտար միասին մեծցեր էին , եղբօր ու քրոջ
պէս . Նեկտար թուի , բայց շատ սիրուն ու
հուժկու չարածճի մըն էր 5—6 տարեկանին .
շատ անգամ պզտիկ տղու կոխներ կռնե-
նային Մարգարին հետ . աղջիկը գրկելուն
պէս գետին կը զարնէր տղան , յետոյ անոր
լալը տեսնելուն կը ծռէր , գիրկը կ'առնէր ու
պզտիկ մայրիկի մը պէս անմեղունակ համ-
բոյրով մը ձայնը կարել կուտար դարձեալ :
Մարգար՝ պզտիկուց հիւանդոտ ու ամենա-
փոքր պատճառէ մը ազդուելու արամաղի՛ր՝
շատ հիւանդ կըլլար . հօրը մօրը համար փոք-
ճանք մըն էր անոր դեղ խմցնելը . Նեկտարը
օգնութեան կը կանչէին շատ անգամ .

— Է՛. . . խմես պիտի քի աղէկնաս , հայ-
տէ , քիչ մըն ալ ես խմեմ կուգես նէ , կըսէր
ան ու շատ անգամ կը յաջողէր խօսքը կա-
տարել տալ :

(1) Այա=միշտ , շարունակ :

(2) Կըլին=կորին :

(3) Չոր = քանի դեռ :

Մարգար վեց տարեկան եղած ասին քայր մըն ալ ունեցաւ եւ անկէ քանի մը ամիս տարբերութեամբ Նեկտարին մայրիկն ալ եղբայր մը աշխարհ բերաւ իրեն : Սարգիս էֆէնտին — Նեկտարին հայրը — որ միշտ զուարճախօս մարդ մըն էր՝ քանի մը օր վերջը նորածինին ի պատիւ արուած ընտանեկան պըզտիկ հացկերոյթի մը ասին .

— Ասոր ըսելիք չկայ , ըսաւ խնդալով իր դրացիին , աղջիկդ աղուս , իմ աղջիկս ալ քու աղուսդ , օ՛րս . . . լմնցաւ գնաց , նէ դուն ինձմէ դրամօժիտ կուգես՝ նէ ալ ես քեզմէ , երկուքնիս ալ ոչ աղջիկ ծախելու եւ ոչ ալ աղջիկ գտնելու համար ասդին անդին կ'իջնանք : Ես իմ մասին չառ գոհ եմ աս գործէն :

Մարգար ու Նեկտար միասին մանկապարտէզ գացին : Յետոյ , թաղային վարժարանը յաճախելուն , մանկապարտէզէն մնացած սովորութեան մը համեմատ , Մարգար միշտ պզտիկ ֆալալիկն մնաց աղջկան . իրականին մէջ սակայն Նեկտարն էր ֆալալիկն . այդ դեղնած աղան շատ անշամ փողոցը շուներէն կը վախնար դպրոց երթալու ասին ու ընկերուէիին երեսը կը նայէր .

— Եկուր , կըսէր աղջիկը անոր ձեռքէն բռնելով ու կ'առնէր կը ասնէր :

Այդպէս մեծցան : Տարիքնին յառաջանալով , բնական է որ քիչ մը անտեղի պիտի նկատուէր իրենց չըջանակին մէջ երիտասարդի մը ու աղջկան մը այդքան մտերմութիւնը , սակայն ասիկա դժուար եղաւ իրենց հասկցնել . մէկուն կարդացած գիրքերը , թերթերը , վէպերը՝ միւսն ալ կարդացած , միւսն ուրիշ գաղափարներով սնած , չէին հասկնար իրարու հետ նուազ սերտ ըլլալու պատշաճութեան «ինչո՛ւն»՝ որ աշխարհի էն ապուշ բանը կը թուէր իրենց : Եւ միւս կողմէն , երկուքն ծնողքներն ալ այնքան եղբայրական , այնքան ազնիւ ու այնքան անսեթեւեթ մտերմութիւն մը կը տեսնէին երկուքնին միջեւ որ , կը զգային թէ սովորական պատշաճութեան կանոնը քիչ մը պէտք էր որ մէկզի՝ ձգուէր հոն , եւ եթէ երբեմն կը փորձէին իսկ անոնց սերտ յարաբերութիւններուն արգելք ըլլալ , չէին համարձակէր շատ առաջ երթալ , կը վարանէին . տարտամ պատկառանք մը — այդ

մաքուր սիրոյն առջեւ — կը ծնէր իրենց մէջ ու ասիկա «ինչ կըսեսն» լսողներընի տալու հախապաշարուած մտածում մը հաւասարակընդունով , երկզիմա թեան մէջ կը ձգէր զիրենք :

— Աղջիկս , ա՛լ լուրջ եղիր քիչ մը , պզտիկս չես , եղբայրդ չէ վերջապէս Մարգարը , կըսէր Նեկտարին մայրը :

— Ի՞նչ կըսես մայրիկ դուն ալ . . . լուրջ չըլլալու ի՞նչ կընեմ կոր . Մարգարին հետ պզտիկութեանս եղբօր քրոջ պէս էիք : Նիսմ ինչո՞ւ չըլլանք , չեմ հասկնա՛ւր , կը պատասխանէր աղջիկը :

Եւ իրօք ալ չէր հասկնար . շատ տարօրիշ նակ կը թուէր իրեն թէ ինչո՞ւ աշխարհի մանկապարդ բանը չըլլար Մարգարին հետ իր մտերմութեան , իր քրոջական սիրոյն շարունակուելը : Իր մաքուր երեւակայութեան առջեւ չէր կրնար պատճառը գտնել այդ անհեթեթ արգելքին : Հիմա որ ինք 15—16 տարեկան աղջիկ մըն էր , դարձեալ տար տար առաջուան պէս , հինգ տարի առաջուան պէս , աշխարհի էն սովորական բանը կը թուէր իրեն նոր հագուստ մը , նոր զարդեղէն մը առնուելուն , կտամ աւելի կարեւոր բանի մը որոշում տալուն ասիկա վազել նախ Մարգարին գաղափարը առնել այդ մասին , միասին երկար պտոյտներ ընել անոր հետ , միասին աշխատիլ , կարդալ , զբօսնուլ , անոր հիւանդութեանս պարագային — ինչ որ շատ հազուադէպ բան մը չէր — երթալ անոր քով նստիլ ժամերով , գեղը խմցնել , զուարճացնել զայն , խօսիլ եւայլն : Երբեմն ծնողացը ըրած զրոտութիւններուն այնքան պարզ ու այնքան միամիտ ուսերու թոթուում մը կը պատասխանէր որ , անոնք ալ զինքը դեռ պըզտիկ աղու մը տեղ դրած , աւելի առաջ չէին կրնար երթալ :

Միւս կողմէ ճիշտ եւ նոյն բանն էր Մարգարին համար ալ : Երկայնահասակ , քնքուշ ու դեղնած երիտասարդ մըն էր հիմա . այնքան նուրբ կազմուածք մը ունէր որ , պզտիկ յուզում մը , բարկութիւն մը , քիչ մը չափազանց աշխատութիւն ուժգնապէս կը ցնցէին , հիւսնադ կընէին զինքը : Նեկտարին հետ միեւնոյն տարին աւարտեցին թաղային վարժարանին շրջանը . բայց այն տարին , ալ

խառնութեան շատութենէն, այնքան նիհար-
ցած էր աղան որ ծնողքը՝ հակառակ իրենց
սովորութեան՝ որոշեցին ամուսնան մը հա-
մար Ալէմտաղի օղափոխութեան երթալ, Հոն
հասնելուն երկրորդ օրն իսկ Մարգար ինք-
նքը այնքան մինակ զգաց որ .

— Մայր, կը ձանձրանամ կոր, եթէ
Նեկտարն ալ չգայ, ես չեմ կենար, ըսաւ .
Քանի մը օր վերջը մայրը դնաց զրացիին
հետնիքն ալ հրաւիրելու եւ Նեկտարը առաւ
քրտաւ, պզտիկ եղբորը հետ .

Մարգարին մայրը իր ապագայ հարսը
զրոյցած էր Նեկտարին մէջ, մօր մը հեռա-
տեսութեամբ, եւ սրտածառ մը չէր տեսներ
առտր արդեւք ըլլալու . ընդհակառակը օրտին
խորհն ուրախ էր այդ մասին, որովհետեւ փո-
խանակ անձանութունի մը՝ աղուն երջանկու-
թիւնը իրեն կատարելապէս ծանօթ եւ այն-
քան ալ աղնիւ աղջկան մը յանձնելը կը զգար
թէ բաղդ մըն էր .

Կինը իր մաքին մէջէն շողջողուն երազ-
ներ կը հլուէր եւ կը ձգէր որ երիտասարդ-
ները իրենց դուռ մանկական մաքուր սիրոյն
անայնքնը վայելեն .

* * *

Թաղին մէջ դեղարան մը կար, իրենց մօտ,
եւ դեղագործը — Թերեւս շատ դեղ խմուռն
համար . . . — պզտիկուց համակրութիւն մը
էր ցուցնէր Մարգարին . Տղան շատ անգամ
ան կերթար կը նստէր ու հաճոյք մըն էր
այն համար դարակներու մէջ շարուած
սպաղան շիշերը, սուփերը, ցուցափեղկին
մէջ փոխուող գունազոյզ զարդարանքը դի-
տելը . Տղու հետաքրքրութեամբ կը հետեւէր
նրա դեղագործին երթեւեկին, հաշիւով,
խաթիւով պզտիկ շիշերու մէջ դեղեր լեցնե-
լուն ուշադիր . Կ'երեւակայէր թէ ասոր պէս
պզտիկ սանդ (հալիւն) մը ու կշիռ մը եթէ
աննային՝ ի՞նչ աղւոր պիտի խաղային Նեկ-
տարին հետ . դեղերուն հոտով լեցուն այդ
միջոցաւ ալ ալեւս ընտանի միջավայր մը
զարմար էր իրեն . ամէն ատեն տուն երթա-
լուն՝ այդ շիշերով, սուփերով, քառալուէ
գործիքներով լեցուն սենեակը աչքին առջեւ
կը գար ու .

— Մայրիկ, ես դեղագործ պիտի ըլլամ
մենամ նէ, կըսէր .

Կաղանդի մը, հայրը պզտիկ կշիռ մը
նուիրեց իրեն . չիտակ Նեկտարին վաղեց այն
օրը . միասին թուղթի կտոր մը կառնէին աչ-
քերնուն առջեւ ու անոր նայելով չամիչ,
ձմեռուկի չորցած կուտեր, ծեծուած շաքար
կը կռէին խնդալով .

— Մայր, դեղագործ պիտի ըլլամ, կըսէր
միշտ . եւ .

— Նեկտարն ալ, կը յարէր յետոյ, այդ-
պէսով ցոյց տալով թէ, անկէ զատ բան մը
ըլլալու դադափարը բացարձակ անկարելիու-
թիւն մը կը թուէր իրեն, հոգիին խօրը .

— Բայց աղա՛ս, աղջիկները դեղագործ
չեն ըլլար, կըսէր մայրը շատ անգամ .

Որուն, շատ պզտիկ եղած ատենը,

— Կ'ըլլայ, ինչո՞ւ չ'ըլլար, պատասխանը
կուտար ուսերը թօթուելով .

Եւ երբ քիչ մը աւելի մեծցաւ .

— Է՛հ . . . ան ալ դեղարանը կը նստի,
կըսէր .

Այդ դեղագործութեան հանդէպ ցոյց տու-
ած մանկական հակամիտութիւնը, արիւթին
հետ չցնդեցաւ, ինչպէս կ'ըլլայ երբեմն պզ-
տիկներուն . ընդհակառակը ասիկա, քանի
մեծցաւ աւելի որոշ գաղափար մը եղաւ
իրեն . Հայրը պատճառ մը չտեսաւ աղուն
բաղձանքին ընդդիմանալու . Թոշակը կրնար
վճարել . ինք՝ որ մեծ հաստատութեան մը
մէջ թոշակաւոր պաշտօնեայ էր՝ շատ գոհ
չէր այդ կեանքէն, թէեւ լեցունկեկ ամառ-
կան մը կը ստանար . ուստի կուգէր որ աղան
աղաա ասպարէզ մը կարենայ ընդգրկել,
ինքն իր գործին — հոգ չէ թէ պզտիկ —
տէրը ըլլայ .

Միայն Մարգարին փափկակաղմութիւնը
քիչ մը մտածել կուտար իրեն . սակայն կը
յուսար թէ ասիկա պիտի անհետանար քանի
տարիքը առաջանար . ուստի չուզեց ընդդի-
մանալ զաւկին ինքնածին հակամիտութեանը
եւ Ալէմ-տաղիէ վերադարձին՝ Մարգար սկը-
սաւ երթալ Բժշկական Վարժարանը . եւ ամէն
օր մինչեւ Իւսկիւսարի բարձունքը ելլել իջ-
նելու յոգնութիւնը չունենալու համար, Գում-
գարուի կողմերը բնակող հօրեղբորը տունը
կը մնար ու շարաթը անգամ մը, արձակուր-
դի օրերը միայն տուն կուգար .

* * *

Ներկուքին համար ալ զժուար եղաւ բա-
ժանումը , միասին մեծնալէ , այնքան տարի
միասին սպրկելէ ետքը՝ ինչ որ իրենց համար,
փոխադարձաբար , կենսական պէտք մը եղած
էր : Սակայն Մարգար , բոլորովին նոր ու
ծանր դասերովը զբաղած , մինչեւ աստիճան
մը գէթ , աշխատութեան մէջ մտացում գտաւ :

Նեկտարի համար այնպէս չեղաւ սակայն .
յայտնի յայտնապէս լացաւ Մարգարին մեկ-
նած օրը . մայրը յանդիմանեց զինքը .

— Աղջիկ , պէպէք չես ալ , խենթու-
թիւնը մէկդի , ամօթ կըսեն բան մը կայ ,
խելքդ չհասնիր կոր :

Աօրկա ա'լ աւելի կսկծեցուց զինքը ,
Մարգարին մեկնելուն համար զգացած ցաւը
բնական հետեւանքն էր զայն եղբօր պէս սի-
րելուն . ուրեմն , ամօթ էր այդ սէրը . ասի-
կա դառն հեգնութիւն մը թուեցաւ իրեն .
այն օրը առաջին անգամ ըլլալով որոշապէս
զգաց թէ իրական կեանքը իր երեւակայածէն
չառ աւելի տարբեր էր , թէ աշխարհ իր մա-
քուր երեւակայութեանը մէջ գծուածէն տար-
բեր , աղտոտ տեղ մըն էր իրապէս , տեղ մը
ուր մաքուրը , անբիծը կը կոխկրտէին սովո-
րաբար , ուր ազնիւն ու վսեմը կը ծաղրէին ,
կը հեգնէին :

Մարգար կուգար երբեմն : օրչափ կա-
րօտցած կըլլային զիրար . այրող բաղձանք
մը կը զգար Նեկտար , ճիշդ հինգ-վեց տարե-
կան եղած ատենուան պէս , այդ նիհար տղան
բռնելու իր հուժկու թեւերուն մէջ սեղմելու
եւ կուշտ ու կուռ համբուրելու . եւ սակայն
. . . ո՛չ . պատշաճութիւնը կամայ կամայ
անպիտօրէն իր մուռքը կընէր հոն , իրենց մէջ .
կը զգային թէ պէտք էր աւելի պաղ ըլլալ
իրարու հանդէպ , այնպէս ցոյց տալ ինքզինք-
նին . կեղծե'լ այսինքն եւ ասիկա , կեղծելու
գաղափարը , կը առաւելեցնէր զիրենք . չէին
ուզեր համադուիլ , հասկնալ այդպէս պէտք
ըլլալուն , սակայն իրականութիւնը կը համո-
զէր զիրենք կամայ ակամայ , ինքզինքը կը
հասկցնէր , իր գմբդակ ներկայութիւնը կը
զգացնէր իրենց :

Նեկտար հինգշաբթի իրիկունները տանի-
քէն շոգենաւերը կը զիտէր :

— Նա' , աս կը բերէ կոր զինքը , կըսէ

անոր սովորաբար եկած շոգենաւին ձայնը
տոնկուն ու հեռուէն նայուածքով կը լա-
փէր կարծեա ծովուն վրայէն հեղհեղէ հե-
ղուկը ճեղքելով յառաջացող հսկան , Յետոյ ,

— Զառիվերը կեղայ կոր , այսինչ տեղի
է , հիմա կուգայ , կըսէր արօփ ի սիրտ :

Մարգար ալ միւս կողմէ շատ զանաղ կը
գտնէր շոգենաւին ընթացքը , կը զգար թէ
ան կըսողատէ իրեն , շոգենաւէն ելլելուն
ձիւռ մը վրայ կը նետուէր ու կը վազէր :

Ներկուքին ալ կը մոռնային այդ վայր-
կեաններուն պատշաճութիւնը , որ իրենց հին
մանկական մտերմութիւնը եկած էր խոն-
դարել , չէին յիշեր թէ հարկ էր պաղ ըլլալ
իրարու հանդէպ , կամ անցած գացած բան
մը կը նկատէին այդ հարկը ու դարձեալ ,
հին աղուոր օրերու մէջ կ'երեւակայէին ինք-
զինքնին :

Աօրկա երազ մըն էր սակայն , զոր ամէն
անգամ կը հիւսէին իրենք իրենց , թէեւ ամէն
անգամուն ալ զիրար տեսնելուն պէս ցնդե-
լու դատապարտուած ըլլար ան . ամէն ան-
գամ կ'արբշտէին հին օրերուն յիշատակով ,
թէեւ ամէն անգամ ալ սթափումը ա'լ աւելի
տիւր կըլլար . իրարու գէմ գալերուն պէս
իրենց վրայ հսկող նայուածքներ իրականու-
թիւնը կը զգացնէին իրենց , ու սառածի պէս
կը մնային յանկարծ երկուքին ալ . Նեկտար
կը կարմրէր , Մարգար կը ամբողջէր եւ հափ-
թէ տատամսոտ կերպով մը իրարու ձեռք
բռնելու համարձակութիւն կուսննային :

— Ինչպէ՛ս էք . . .

— Աղէ'կ . . .

Դառն յուսախաբութիւն մըն էր ասիկա
իրենց համար . Սրբեմն , շատ քիչ անգամ ,
կրնային առիթ ունենալ քանի մը վայրկեան
առանձին ըլլալու եւ այդ միջոցին ալ , լուռ-
թիւնը կը խօսէր . այնքան շատ բան կ'ուե-
նային ըսելիք որ ուրկէ սկսելիքնին անկարելի
կըլլար դանել եւ լուռ կը կենային զէմ առ
զէմ , շատ անգամ նոյն իսկ առանց իրարու
երես նայելու :

* * *

Նեկտարին խորտա բնասութիւնը սա-
կայն կըմբոսանուր այս յուսախաբութիւննե-
րուն գէմ , կ'եռար , գանոնք ջնջելու հարկ մը
կը ծնէր իր մէջ :

Այդ հարկը առաջնորդեց զինքը կամաց
կամաց խորհելու, արամարանելու թէ ինչո՞ւ
պատշաճ չէին նկատուի իր ու Մարգարին
մտերմութիւնը: Պատասխանը այս «ինչո՞ւ»ին
նիւս ինքնին — որովհետեւ զրացնութիւնը
բաւական կապ մը չէր նկատուել րայ յարա-
բերութեան: Ուրեմն ուրիշ աւելի զօրաւոր
կապի մը պէտք կար իրենց միջեւ, պատշա-
նութեան հարկը գոհացնելու, պապանձեցնելու
համար գոնէ: Եւ ընտկանարար առաջնոր-
դեցաւ այդ կապը փնտռելու: Մէկ հատ մը
միայն կար արդէն — ամուսնութիւնը: Այդ
գաղափարը նախ ցնցեց զինքը քիչ մը, վա-
նձ ուղեց, խրաչեցաւ անկէ, որովհետեւ
միջեւ հիմա երբեք ամուսին մը չէր երազած
Մարգարին մէջ, եղբոր մը, մտերմի մը սի-
րով սիրած էր զայն: Սակայն երկար թա-
փուռումներուն, մտախոհութիւններուն մէջ
անկարելի եղաւ կասելու ուրիշ միջոց մը
գտնել, եւ այդ գաղափարը տակաւ անդրա-
դաժնալով ուղեղին մէջ, քիչ քիչ սկսաւ ըն-
տելանալ անոր հետ: Ի՞նչ, ամուսինը ըլլալով
ի սիրելու իրաւունքը կորսնցուցած պիտի
ըլլար միթէ: Ո՛չ: Ուրեմն . . . ո՞վ կ'արդի-
նէր որ միեւնոյն ատեն մտերմի մը եղբայր մը
սիրէր ատոր մէջ, ամուսին մը սիրած ատեն:
Անկի աղէկ չէ՞ր ա՛մէն ինչ ըլլալ իրարու հա-
մար: Եւ ա՛րդէն, օր մը պէտք պիտի ըլլար
որ ամուսնանար, մինչեւ հիմա ինք չէր մը-
տածած ատոր վրայ, բայց պէտք պիտի ըլ-
լար: Ուրիշի մը հետ ամուսնութիւն մը — որ
պատշաճութիւնը աւելի պիտի ընդլայնէր իր
Մարգարին մէջ — կարելի՞ էր իրեն հա-
մար, մտածեց հիմա: Ո՛չ, Պէտք էր որ ան
ամուսինը ըլլար ուրեմն. այն ատեն ո՛չ ոք
պիտի միջամտէր իր ու անոր մէջ, ոչ մէկ
նշուածք պիտի արդիւնէր իրենց մտերմու-
թիւնը: Այս գաղափարը օրերով պրկեց իր
մտքը, արդեօք Մարգար ի՞նչ պիտի ըսէր:
Եւ կարծէր թէ պիտի հաւանէր, որովհետեւ
նա ալ զինքը կը սիրէր, գիտէր, ու ապա-
նով էր. բայց, թերեւս . . . Եւ այդ պըզ-
ով «թերեւս»ը կը տանջէր զինքը: Որոշեց
առաջին առթիւ իր գաղափարը յայտնել Մար-
գարին: Ամիսներով չկրցաւ: Երբ առիթը
նկատուեցաւ, ինք վարանեցաւ խօսելու, վախ-

ցաւ թէ ան պիտի չհաւանի թերեւս եւ որ-
չափ որ ալ փոքր ըլլար այդ հաւանականու-
թիւնը, գաղափարը — մերժումի գաղափա-
րը — այնքան ցնցող էր որ կը սարսռեցնէր
զինքը ու ետ կընկրկէր: Ուրիշ ատեն ալ
երբ անպատճառ խօսիլ կ'որոշէր, առիթը կը
պակսէր առանձին ըլլալու:

Արձակուրդին էր, օր մը, վերջապէս,
երբ իրիկուան դէմ միասին դէպ ի մընէնին
Լիւսը պտոյտի ելեր էին, Նեկատար ճամբէն
դուրս գաշտին մէջ կեցած խոշոր քարի մը
վրայ նստեցաւ վայրկեան մը, ճիգ մը ըրաւ
ինքզինքին վրայ ու՝

— Մարգար, բարեկամս, ըսաւ, կը տա-
ռապեցնեն մեզ կրկուքս ալ. խորհեցայ թէ
տարկաւ ասանկ չկրնար շարունակուիլ. . . եւ
բան մը մտածեցի, եթէ սակայն անպատեհու-
թիւն մը չեա գտնուի դուն ատոր մէջ. ան-
կեղծ կը խոստանա՞ս ըլլալ, այո՛ կամ ոչ:

— Գիտես որ միշտ անկեղծ եմ:

— Եթէ առաջարկելիք միջոցս չեա ուղեր,
կրեք երկուքնիս ալ պէտք չէ որ մտածենք
անգամ անոր վրայ:

— Լա՛ւ, ըսաւ Մարգար սթգունած:

— Ամուսնանա՞նք . . ., մըմտաց Նեկատար
աչքերը վար առած ու կապարմիր, ի՞նչ
կըսեա, երջանիկ պիտի չըլլա՞նք իրարու հետ:
Եւ պատասխանին սպասեց, աննկարա-
գրելի յուզումով մը. այդ պատասխանը կեան-
քի վճիռ մը պիտի ըլլար կարծես իրեն հա-
մար. աչքերը մարգագեանին յառած՝ հոգիով
Մարգարին շրթունքներէն կախուած էր.
վայրկեանը չէր լմնար, կ'երկարաճուէր, կը
տատամսէր կարծես . . . Ո՛հ . . . պատաս-
խանը չէր գար. գերազոյն ճիգով մը համար-
ձակեցաւ աչքերը վեր առնելու. Մարգար
զինքը կը լափէր աչքերով, չլացած, արբիւ
ո՛ւ անձայն . . .

— Չե՞ս խօսիր բարեկամս . . .

— Հողի՛ս . . . ըսաւ աղան, արդարեւ բո-
լոր հողին դնելով կարծես այդ մէկ բառին
մէջ: Ատիկա կայծ մըն էր հողին խորէն
փրցուած, հատոր մը այդչափ պերճախօս
չի կրնար ըլլալ:

Այն օրը, առանց ուրիշ բառ փոխանակե-
լու, քով քովի կամաց կամաց տուն դար-

ձան : Երկուքնին ալ զգացին սակայն թէ փոփոխութիւն մը տեղի կունենար իրենց մէջ. հոսքիւ բառին նշանակութիւնը կընդարձակուէր յանկարծ իրենց առջեւ . աւելի՛ ցայտուն , աւելի՛ կենդանի եւ անսահմանօրէն չքեղ սաղագայի հետանկար մը կը բացուէր յանկարծ առջեւնին եւ աչքերնին հոն յառած՝ կիանքի ճամբան քալելը որքա՜ն հաճելի պիտի ըլլար այնուհետեւ իրենց համար :

(Մնացածը յաջորդ քիւռով)

ՓԱՅԼԱՆ

ԵՐՈՒՍԱՂԷՍԻ ԳՈՐԾԵՐ

Թէեւ վերջին բառը ըսած ըլլանք , թէ՛ Մառիսի մէջ եւ թէ՛ Արեւելքի ալ միջոցաւ , Երուսաղէմի Վանքին մատակարարութեան շուրջը յարուցուած անխման սոսկաբարին առթիւ , որ առեւն տանն ծայր կուտայ օրաթերթի մը մէջ , բայց անօդուտ չենք սեպեր տնգամ մըն ալ անդրադառնալ անոր՝ խմբադրականի մը ասթիւ զոր հրատարակեց այս օրերս Բիւզանդիոն , «Մեր հաստատութեանց վիճակը» վերնադրին տակ : Այդ խմբադրականին վերջը , մեր պաշտօնակիցը յատկօրէն ու գիտակցօրէն կը պարզէ իր տեսութիւնները Երուսաղէմի դործերուն վրայ , — տեսութիւններ զորս այնքան աւելի սիրով կուզենք արտատպել որքան սիրով զրած ենք արդէն միւսեւոյն նիւթին վրայ , միակ նպատակ ունենալով միշտ՝ հանրութիւնը զգուշացնել այն նպատակաւոր Գրոնիկներէն ու անոնց օգնութեան համոզ թղթակցութիւններէն որոնք կը ձգտին ժողովուրդը պաղեցնել այն հոյակապ ու նուիրական ուխտատեղիէն որուն Միաբանութեան զուտը կը գտնուի մեր ամէնէն աւելի պատկառելի ու վստահելի բարձրաստիճան եկեղեցականներէն մէկը , Ամին . Տ. Յարութիւն Ս. Պատրիարքը :

Ծաղիկ եւ Մանգուսի , արդէն իսկ անցողաբար յայտնած են իրենց կարծիքը այս խնդրոյն վրայ : Աւասիկ Բիւզանդիոնի ալ տեսութիւնը , որ իր մասնաւոր կշիռը ունի եւ իր կարգին կուգայ փարատել այն դաշտակցութիւնը զոր անիրաւաբար ու անխղճօրէն սմանք կը փորձեն սփռել Երուսաղէմի Վանքին մա-

տակարարութեան վրայ որուն արդի կանոնաւոր վիճակը ու օրինակիլի հանգամանքը հազուագիւտ է գտնել Ս. Աթոսին տարեկրութեանց մէջ .

«—Վերջերս Երուսաղէմի Վանքին մատակարարութիւնը շատ քննադատուեցաւ «հալիւ չտալուն համար» : Մենք այս վիճաբանութեան չմտնակցեցանք , եւ դարձեալ միաք չունինք մատակցելու . որովհետեւ կը յիշենք Երուսաղէմի Վանքին 25—30 տարի առաջուան վիճակն ալ , երբ տարուէ տարի կանոնաւորապէս հաշիւները Պոլիս կը զրկէր ձեռնառ ժողովին , եւ որովհետեւ զրկած ժամանակը չա՛տ աւելի անկարգ , չա՛տ աւելի խեղճ էր քան հիմա որ հաշիւ չի զրկեր Պոլիս , մեր մասին նախամեծար կը սեպենք որ արդի վիճակը շարունակէ , եւ ա՛լ Ազգին վրայ ընտելլայ Վանքը : Հաշիւ զրկել , բայց որի՞ , Հաշիւ առնող կա՞յ : Մեր Պատրիարքարանն ալ հաղիւ իր ելեւմուտքովը կարող է զրադիլ : Եթեպէ չիտակ սա մեր շուրջի հաշիւները : — Իսկ հաշիւ՝ տեղւոյն վրայ , Միաբանութեան մէջ , բայց անիկա ալ ծածկող չկայ . որովհետեւ , ինչպէս կարգացինք անցեալները Երուսաղէմէն զրուած թղթակցութեան մը մէջ , Տ. Յարութիւն Պատրիարքը , այն պաշտօնադրին մէջ զոր ուղղած է Միաբանութեան ընդհանրական ժողովին , մինչեւ այս Մայիս 1 լմնցած տարեշրջանի հաշիւներուն պատրաստուած եւ ժողովին մատուցուին որոշուած ըլլալը կը ծանուցանէ : Արդեօք ըսե՞լ կուզուի թէ Երուսաղէմի Վանքին զրամները կը գողցուին , Յարութիւն Պատրիարքը , կամ իր Եկեղեցական Տեսուչ Դեռնդ վարդապետը զրամ կամ գոյք գողցնելու երեւոյթը ունի՞ն : Գտե՛ր էք մարդիկը որ կուզուի տան Երուսաղէմի Վանքը : Ուրիշ բան է իթէ իրենց համար ըլլայ : Ատոր խօսք չունինք , եթէ այնպէս կուզեն հասկնել , Բայց Յարութիւն Պատրիարք ի՞նչ պիտի ընէ զրամը , քանի որ իր բոլոր ունեցածները Վանքին կապեց լմնացուց , եւ մարդ մարդասան չունի որ անոր զրամ կերցնէ ի վնաս վանքին : Գտե՛ր ի՞նչ Դեռնդ Վրդ. ին , կը վախաբենք որ Դեռնդ Վրդ. մըն ալ Եկեղեցուէի Հիւանդա-

նային մէջ ըլլար, հատ մըն ալ Պատրիարքարանի մէջ, հատ մըն ալ այս կամ այն վանական հաստատութեան մէջ, բոլոր խոնարհալ ելեմուտքները կարգի կանոնի դնելու, օրինաւոր հաշուակալութիւն հաստատելու, հասցիքի ազրիւրներ ստեղծելու, ծախքերը կրճատելու, յանիրաւի ասոր անոր զբաղ չպարգեւելնուն համար ամենքն իրենց ղեմ ոտք հանելու եւ լրացիրները զժողովանելու, եւ ղեղծումներուն առաջին անգամ համար: Ղեւոնդ Վրդ. ին անձնապէս չհամարիր իրենց է: Բայց իր ելմական մատակարարութեան յաջող արդիւնքն ուրանալով ազդեցութիւն ունի ըլլար: Կը ճանչնանք Հայ վաճառական-սեղանաւոր մը, որ մեր հրապարակին ամէնէն ջոջ Տաւրուսէն մին կը լարէ, եւ որ, Երուսաղէմի վրայ խօսուած ատեն, չի դադրիր կրկնելէ որ եթէ Ղեւոնդ Վրդ. իր գործին մէջ ըլլար, ինք սիրով կու տար անոր տարեկան հազար լիրա թոշակ,

եւ զարձակ ինք կը շահէր: Ասիկա շողոքորթութիւն մը չէ. զի ակնարկեալ անձնաւորութիւնը ո՛չ զոք շողոքորթելու հարկին մէջ է: Բայց նաեւ անոնք որ կը յիշեն Երուսաղէմի Վանքին 25—30 տարի առաջուան ցաւալի, ողորմելի, ամօթալի՝ վիճակն եւ անկէ ի վեր կրած բարեփոխումները, անկարելի է որ չխոստովանին թէ Ղեւոնդ Վրդ. ին ուշիմ եւ ճարտար ղեկավարութիւնը, Տ. Յարութիւն Պատրիարքին ազդեցիկ եւ հեռատես վարչութեան շնորհիւ, ի հիմանց բարեփոխեց Վանքին ելմական վիճակը, եւ հաստատուն կռուանի մը վրայ զբաւ զայն, մեծ հոգէ մը ազատելով Ազգը, եւ վերահաս ծանր աղէտքէ մը փրկելով նոյն ինքն Միաբանութիւնը, եւ այս՝ աւելի աննպաստ առեւտրական ու գրամական պայմաններու մէջ, քան ինչ որ վայելած էր Վանքը նախորդ Պատրիարքներուն եւ նախորդ ելմական տեսուչներուն օրովը:» —

ԵՐԵՔ ՏԱՐԻ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՄԷՋ

ՌՕՄԷՆ ՏՕՐԻՆԵԱՔԻ ՌԻՂԵԻՌՐԱԿԱՆ ԱՐԿԱՇՆԵՐԸ

(Շար. ԺԱ. Գլուխին)

«Պէնիթայի հայրն ալ իր կարգին առաջնացաւ, եւ վրաս կատարի նայուածք մը նետելէ վերջ ըսաւ՝ մէկ ձեռքովը սեղմելով մէջքին անցուցած ուշիւղիւրին բունը:

«— Դուն ինծի խոստացած էիր երկու քարէն միայն վերադառնալ, քանի որ խոստումը չընեցիր, ես ալ իմ ազգիկս կ'ամուսնացնեմ ուրիշ մը հետ:

«Այս ընթացքը բոլորովին խելքս գլխէս հանց:

«— Բարեկամներ, ըսի իմ մէկ քանի հասարակներուս, կ'երգնում հոս որ Պէնիթայ իմ նշանածս է, եւ թէ զայն ընծի վրանսնայնն սա երիտասարդին հետ: Կը պատահէ որ ամէնքդ ալ օգնէք ինծի, այս անհրաժեշտ արդիւնքը համար:

«Բայց հաղիւ այս խօսքերը արտասանած էի, երբ տասերկու քի չափ մարդիկ վրաս յարձակեցան, զիս լաւ մը կաշկանդեցին եւ տեսակ մը բանտի մէջ նետեցին:

«Ձեք կրնար երեւակայել թէ ինչ սոսկալի հոգեկան վիճակի մը ենթարկուեցայ, ինքզինքս ա՛յսչափ վատաբար Պէնիթայէն բաժնուած տեսնելով:

«Ոտքս ձեռքս կապելէ վերջ զիս նետած էին հոգէ պատերով խօցել մը մէջ՝ որուն դուռը ամրապէս փակուած էր:

«Կատաղութիւնը սակայն գերմարդկային ոյժ մը տուաւ ինծի:

«Ամբողջ ժամ մը աշխատեցայ, եւ վերջ ի վերջոյ յաջողեցայ կռնել, փրցնել ձեռքերս կաշկանդող կապերը:

«Բայց հաղիւ ազատած էի, եւ անա աղ-

մուկ մը բարձրացաւ եւ հրացանի քանի մը հարուածներ արձակուեցան իրարու ետեւէ :

« — Կռիւ մը , աղաղակեցի ես ինծի . ապահովաբար բարեկամներս են՝ որոնք եկած են զիս ազատելու :

«Իրաւ ալ քիչ ետքը զուրը կտարեցաւ :

«Բարեկամներս էին :

«Շնորհակալութիւն յայտնեցի իրենց , եւ առանց ժամանակ կորսնցնելու վազեցի Պէնիթայի տունը :

«Մայրը միայն հոն էր :

«Ինծի լալով պատմեց թէ աղջիկը առեւանգած էին հակառակ իր կամքին , եւ թէ չէր գիտեր ուր տարած ըլլալին :

«Դուրս խոյացայ խնայի , եւ բաւական փնտռեց . վերջ յաջողեցայ գտնել հետքերը քանի մը ձիաւորներու՝ որոնք մեծ արագութեամբ հեռացած կ'երևային :

«Իմ կարգիս ձի մը ցառքեցի եւ հետեւեցայ այդ հետքին :

«Առտու էր , եւ օդին զովութիւնը քիչ չատ ուշքի բերաւ զիս :

«Խորհեցայ որ ես մէկ հոգի էի , մինչդեռ ձիաւորները կրնային բազմաթիւ ըլլալ :

«Պէտք էր կատարեալ խոհամտութեամբ շարժիլ :

«Յորեկուան բաւական ժամանակ կարդեա , երբ վերջապէս հիւզակի մը առջեւ հասայ :

«Շէնքին մօտերը հինգ վեց ձիեր կ'արածէին , ամէնքն ալ թամբուած :

«Զիւռս ընթացքը երազեցի , վախճալով որ ուշ կը հասնիմ :

«Զիս տեսնելով , հինգ վեց հոգի երեւան ելան , կատարելապէս սպառազինուած :

« — Բարեկամներ , ըսի իրենց , ձեզի հետ դորժ մը չունիմ ես , կրնաք վստահ ըլլալ որ ոչ մէկիւնուդ չլաւս պիտի հասցնեմ . Աւաղակ մը կայ հոգ՝ որ նշանածս առեւանգեց , անոր հետ է իմ գործս :

«Եւ սրովհետեւ վարանում ցոյց կուտային , առանց ժամանակ անցընելու յարձակեցայ անոնցմէ ամէնէն մօտաւորին վրայ , թուրը կորզեցի ձեռքէն , եւ ամէնքը մէկ ետ մղելով խոյացայ հիւզակէն ներս :

«Հիւզակը սակայն մարդոյմով լեցուն էր :

«Բարձրացուցի թուրս , բայց դժբաղդութենէս՝ առաջին հարուածին խակ կտարեցաւ , եւ հրախալալը միայն ձեռքս մնաց :

«Բա՛ն լաղուկներ բռնեցին զիս , զրեթէ ակնթարթի մը մէջ , եւ խնայն կաշկանդեցին :

«Ան տտեն , հակառակորդս մեզի մօտեցաւ եւ հարցուց թէ լաւ կապած էին զիս :

«Թուքի երեսը՝ պոռպոլ :

« — Ասո՛ր միայն արժանի են այն մարդիկը՝ որոնք վատաբար անպաշտպան աղջիկ մը կը բռնաբարեն :

«Յետոյ , կռահելով որ Պէնիթա մեր քով սենեակին մէջն է , սկսայ զայն կանչել :

«Աղաղակ մը տատախանեց ինծի : Պէնիթա հոն էր իրապէս :

«Հակառակորդս՝ դաշոյնը մերկացուցած իմ վրաս խոյացաւ , զիս սպաննելու մտադրութեամբ , Բայց Պէնիթայի երեւումը զինքը ետ կեցուց իր մտադրութենէն :

«Իդմէ անոր դարձաւ , եւ կատաղի կռիւ մը սկսաւ երկուքին միջեւ :

«Ամէնքը մէկ սենեակ մօտան , եւ բաւական տառն տեսնելին աղաղակներն ու կսկիւ :

«Յետոյ լսութիւնը ախրեց չորս զին :

«Զէք կրնար երեւակայել թէ ամբողջապէս տեսնել ինչ սոսկալի բարոյական տանջանքներով անցուցի :

«Բաւական վերջ , սենեակին զուրը բացուեցաւ , եւ հակառակորդս դուրս ելլելով ըսաւ ինծի .

« — Մտի՛կ ըրէ , եթէ երբեք կ'ուզես ապրիլ , դուն ալ քու կարգիդ պիտի ընես այն երգումը՝ զոր Պէնիթա արդէն իսկ ըրաւ իր կողմէ : Պէնիթա երգումըցաւ թէ իր ազատ կամքով պիտի ամուսնանար ինծի հետ , եթէ երբեք տասը վայրկեան երկուքդ առանձին ձգեալու ըլլամ . Կ'երգնու՞նք թէ դուն ալ պիտի հաւանիս այս ամուսնութեան :

«Նախ չուզեցի ընդունիլ այդ պայմանը , մտածելով թէ Պէնիթա ալ անչուշա տարբեր կերպով մը չէր վարուած :

«Յետոյ ըսի իրեն .

« — Քեզի պէս թշուառականի մը խոք չեմ տար ես , բայց քանի որ Պէնիթա երգումընցեր է քեզի , կրնամ վստահ ըլլալ թէ իր

խաբը իմինէս աւելի պիտի յարգեմ :

«Այս յայտարարութեանս վրայ, իսկոյն քակեցին կտակերս, եւ զիս մղեցին սենեակին ներս :

«Պէնիթա վզիս փարեցաւ :

« — Թիպո'ւրսօ, ըսաւ, անանկ կարծեցի թէ պիտի մեռնիմ առանց վերջին անգամ մը քեզ տեսնելու : Աստուածածինը սակայն լսեց աղաչանքս : Աճապարէ', ժամանակ չունինք, առ սա դաշոյնը եւ սպաննէ' զիս, հիմայ ուր է պայմանաժամը կը լրանայ :

«Այդ միջոցին դուռը բացուեցաւ, եւ հակառակորդս ներս մտաւ :

« — Ինչ է ան, ըսի իրեն, առանց ներքին խառնելու մտանելու, տակաւին տասը վայրկեանը չլրացաւ, այսպէ՞ս կը բռնես քու ետքդ :

«Թշուառականը դուրս ելաւ իսկոյն :

«Իրկեցի Պէնիթան, եւ ըսի իրեն :

« — Տո'ւր այդ դաշոյնդ ու միասին փախնք :

« — Ո՛չ, անկարելի է որ յաջողինք, լաւ խեղճ աղջիկը : Ա՛ռ, սպաննէ զիս, ապրէ՛ դուն, եւ այդ դաշոյնով իսկ լուծէ իմ խեղճս :

« — Պէնիթա', Պէնիթա', աղաչեցի իրեն, դիտե՛ր որ առանց քեզի կեանքը անտառելի է ինծի համար : Կը նախընտրեմ քեզի հետ մեռնիլ, քան թէ քեզմէ բաժնուած մնալ :

« — Մեկնէ՛ ըսի քեզի, պնդեց նորէն, իմ հարցն քանդուած է, կեանքս թուճաւորուած, ինչպէ՛ս կ'ուզես որ ապրիմ. սղանա՛լ' զիս, սպաննէ' . . . :

«Այդ միջոցին հակառակորդս նորէն ներս մտաւ, այս անգամ իր ընկերներուն հետ :

«Աչուըններս դարձած էին : Խոյսացայ իրենց վրայ, եւ դաշոյնս միտցի ամէնէն աւելի զոտոռոյին կրօնքը :

«Միւսները ընկրկեցան :

«Անմիջապէս դոցեցի դուռը, եւ սենեակին մէջ գտնուող կարասիները՝ անոր ետին մղելով իբր պատուար :

«Բանտարկուած էինք երկուքս ալ :

«Պէնիթա ոտքս ինկաւ եւ սկսաւ աղաչել :

« — Թիպո'ւրսօ, Թիպո'ւրսօ, կ'ըսէ՛ր հե-
տապի, մի' թափեր այս խեղճերուն արիւ-

նը, զսպաննէ՛ զիս եւ փախիր . . . մեռնելէս վերջը ա՛լ աւելի պիտի կրնամ սիրել քեզ :

« — Ո՛չ, ո՛չ, զինքը պիտի սպաննեմ, կ'աղաղակէի իրեն :

« — Պէնիթա', պոռաց հակառակորդս դուռէն, մտածէ անգամ մը, խօսք տուած էիր ինծի : Իսկ դուն, Թիպուրսօ', ելիր դնա, ո՛չ ոք պիտի դպչի քեզի :

« — Վա՛ս, աղաղակեցի, անիծած ըլլաս, թո՛ղ թաքը չպակօս երեսէդ :

«Այդ վայրկեանին սոսկալի աղաղակով մը դուռը կտրեցաւ :

«Տասեփու հողի ներս խոյացան՝ հրացաններն ինծի ուղղած :

«Փայլակի արագութեամբ զրկեցի Պէնիթան՝ եւ ձեռքի դաշոյնս միտցի սիրաբ :

« — Շնորհակալ եմ, Թիպո'ւրսօ, շնորհակալ եմ, կը սիրեմ զքեզ, հեղեղաց տարաբաղդ աղջիկը՝ եւ մեռած ինկաւ ոտքերուն առջեւ » :

Թիպուրսօ չկրցաւ շարունակել :

Ռաքի ելաւ, եւ անկիւնէ մը մարդկային դանկ մը առնելով ծուռկի եկաւ անոր առջեւ եւ սկսաւ համարելով խնթի մը պէս :

— Ներէ', Պէնիթաս, ներէ' ինծի, կ'ըսէր վայրկեանը մէյ մը :

Ձկրցայ դիմանալ, եւ ես ինքս ծուռդի եկայ իր քովը : Շունն ալ մեզի մօտեցաւ, եւ սկսաւ ոռնալ ախուր շեշտով մը :

Քանի մը վայրկեան անցաւ այդպէսով : Յետոյ յանկարծ, Թիպուրսօ ոտքի ելաւ, եւ ըսաւ՝ խօսքը ձեռքի գտնկին ուղղելով :

— Գիտես Պէնիթաս, որ եթէ երբեք այսչափ ատեն քեզի հետ ապրեցայ՝ միակ նոյառակս քու վրէժդ լուծել էր : Գիտես որ հայրը մեծոյցի գաւկին առջեւ, եւ զաւակն ալ մօրը աչուըններուն տակ : Գիտես թէ աչիքները դուրս թափեցի այդ կնոջ՝ որ քու առեւանդիչդ աշխարհ բերած էր : Ամէնքն ալ մեռած են այս պահուս : Ես ինքս իրենց հետ այնչափ վայրադուրեմքով վարուեցայ, որ չափ առեւանդիչդ վարուած էր մեզի հետ : Թո՛ղ անէճք թափի անոնց վրայ, անիծուած ըլլան, հիմա որ ամէնքն ալ մեռած են իմ ձեռքովս :

Այս խօսքերը արտասանելէ վերջ տաքի ելաւ, եւ խոշոր քայլերով սկսաւ պատուքիլ սենեակին մէջ :

Յետոյ, եկաւ կեցաւ իմ առջիւս, եւ ըսաւ կատարի ձայնով մը .

— Այո՛, ամէնքն ալ մեռած են, մեռած, մեռած, հիմայ ես ինքս կ'ուզեմ մեռնիլ, ես ինքս կ'ուզեմ վայելել այդ բարերազգութիւնը, որովհետեւ կեանքի այս պայմաններուն մէջ մահը աւելի բարիք մըն է, քան թէ չարիք մը : Եւ ստիպան մահը միշտ կ'ուշանայ դադու, ի դուր զայն կը հետապնդեմ, ի դուր զիս մեռցնողի մը կը սպասեմ : Այս կողմերէն պատահաբար անցնող մարդերը զիս տեսնելուն պէս կը փախչին կ'երթան, եւ ես չեմ կրնար համեմել իմ փափաքիս :

(Շարունակելի)

ՅՈՒՇԱՏԵՏԻ

Ս. Հայրապետը սեպտ. 3 ին թիֆլիզ հասեր է, ուր տան օրի չափ մնալէ ետքը՝ պիտի վերադառնայ Էջմիածին : Ն. Ս. Օժուրիւնը եկեղեցական թափօրով առաջնորդու եր է Վանքի Մայր եկեղեցին ուր հաւաքուած ժողովուրդը օրհնելէ ետք՝ Առաջնորդարան ելեր է հանդստանալու : Յաջորդ օրը այցելեր է թիֆլիզի հրամանատարին :

Բարեգործական մեծ կալի կտակի մը լուրը կը հասնի Կովկասէն : Ամսոյս 4 ին թիֆլիզի մէջ վախճաներ է վաճառական Գէորգ Յակոբեան որ իր ամբողջ անշարժ կալուածները, 200,000 ռուպլի արժողութեամբ, կտակած է տեղւոյն Ներսէսեան զարոյցին :

Ս. Պատրիարք Հայրը կիրակի առաւօտ պաւտարպեց եւ քարոզեց Իւսկիւտարի Ս. Խաչ եկեղեցին, որուն ածախմբութիւնն էր, եւ մինչեւ երեքշաբթի հոն մնալով՝ հիւրընկալուեցաւ Տօքթ. Թորոքմեան էֆ. ի կողմէ : Ն. Սրբազնութիւնը երեքշաբթի առտու քարոզեց Ս. Կարապետ եկեղեցին, յատկապէս կիսնաբու համար : այցելեց նաեւ Պէրպէրեան վարժարանը :

Խաչի սօնը հանդիսաւորապէս կատարուեր է Արմաշ, բազմաթիւ ուխտաւորներու ներկայութեամբ, 700 ոսկիի մօտ հասոյթ արտադրելով :

Պելիական դեսպանը շնորհակալութեան զիւր մը ուղղած է Ս. Պատրիարք Հօր որ ան. ձառք զեսպանատուն երթալով՝ ցաւակցութիւն յայտնած էր Պէլճիքայի Թաղուհիին մահուան առթիւ :

Մանգումէի Էֆեմար վերսկսաւ աշխարհարար Նարեկի հրատարակութեան, Վազիթի թարգմանութեամբ :

Երկու ծանօթ հայ բժիշկներ, Տօքթ. Նազուկեան եւ Տօքթ. Տաղաւարեան որոնք տարիներէ ի վեր կը պաշտօնավարեն Բերայի ֆրանսական հիւանդանոցին մէջ, «Օֆիսի Կապիտալի» պատույ տալիճանը ստացած են ֆրանսական կառավարութեան կողմէ, իբրեւ վարձատրութիւն յիշեալ հիւանդանոցին մէջ իրենց ցոյց տուած ծարարութեան եւ մատուցած ծառայութեանց :

«Իւնիօն» Ասպնովագրական Ընկերութեան Ընդհ. Տնօրէն Պառնոտ Սըրիզ, որ երկու շաբաթէ ի վեր մայրաքաղաքս կը զբոսնէր իր հնոջ ու զաւկին հետ, եւ հիւրընկալուած էր նոյն Ընկերութեան Թարգմ. ճիւղին Տնօրէն Սիմոն Էֆ. Գայսէրլեանի կողմէ, շարժուս սկիզբը Բարիզ վերադարձաւ : Սիրքէճիի կայարանը ողջերթի դացած էին ֆրանսական դեսպանատան թարգման Պ. Լըստու, Տ. եւ Տիկին Մ. Գայսէրլեան, Տ. եւ Տիկին Մ. Տէր-Ներսէսեան եւ ուրիշ ներկայացուցիչներ ապահովագրական Ընկերութեանց :

ՄՍՍՅԱՆԵՐ

Իզմիրէն, Մ. Մամուրեան տպագրութեամբ իւր ընծայուած հատոր մը, Առեւտրական-Տնտեսական աշխատ, հեղինակութիւն Կ. Ս. Թուխմանեանի, տնօրէն կիրառի երկսեռ վարժարաններուն : Հինգ մասերու բաժնուած է 332 էջերէ բաղկացած լուրջ գործ մըն է : Գին 15 դրամ :

Դարձեալ Իզմիրէն, Տեղեկագիր հայ Ընկերացաւ, որ ամիսի կերպով կը պարզէ այդ օգտակար հաստատութեան 32րդ շրջանին (1901) գործունեութեանց վիճակը : Մէկ տարուան ժամանակամիջոցի մը մէջ, Ընկերացաւ այցելած են 19,232 հոգի, — օրական միջին հաշուով 52 հոգի, — ինչ որ լաւ գաղափար մը կուտայ Իզմիրի Հայրուն Ընկերացաւութեանը վրայ : 1901 յունուարին զեկտեմբեր, Ընկերացաւուն մուտքի ընդհանուր գումարը եղած է 12,099 դրամ : Տեղեկագրին մէջ մանրամասնաբար շարունակուած են թէ իրր նուէր եւ թէ դրամով ստացուած բոլոր զիրքերուն ու թերթերուն ցուցակը ինչպէս նաեւ դրամական նպաստներու, բաժանորդագրութեանց հաշիւները եւ յարակից մանրամասնութիւններ կանոնաւորապէս :

Արժանատի Կ. Ս. Ի. Թ. Ի. Դեմէն

Տպագրութիւն Ե. ՄԱՏԻՆԻԱՆԵՆ

Կ. Պոլիս, Յիւնանքաւ եօղաշու, Թիւ 27

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՇԷՐՋԱՅԻ

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ
Յաճախորդաց գիրքի քուրճիան
համար

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ

Եթէ կ'ուզէք ամէն
տեսակ գոնարեղէններ
ուշնենալ . գիտեցէ՛ք

Կ. Պոլիս, Ոսկերչաց
Շուկայ մեծ փողոց թիւ 13



Հերձալի վաճառատուներ ուշի եւրոպական
ճաշակով պատրաստուած գոնարեղէններ .
ամենքն ալ առաջնակարգ ըլլալու պայմանաւ .
Հերձալի վաճառատուներ գիններն անորոշելի են,
Հերձալի վաճառատուներ ուշի արծաթեղէն
առարկաներ .
Հերձալի վաճառատուներ ուշի ժամացույցներ
եւ արծաթեղէն գաւազաններ (պլաթօն).

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հարիւրին քան կանխիկ, մնացեալին հա-
մար շարաթական հարիւրին նիկզ վճարում .
Կանխիկ գնողին համար 100ին 5 դեղչ,
Գործածուած գոնարեղէններ՝ եթէ միաս-
ուած չեն՝ 100ին 10 դեղչով ետ կանուրին.



Անկարելի է որ ընտանիք մը առանց կորի
մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքե-
նայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը
անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ
գոգոռութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է .
Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

մեքենան լաւագոյնն է . սոյն մեքենան ամենէն
աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ
գիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի
մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախուին միւսիայն Սինկեր Ընկերութեան վաճառա-
տանց մէջ՝

ԲԵՐԱ, Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դիմաց .

ԿԱԼԱԹԱ } 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը .
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին Դիմաց

ՊՈԼԻՍ } 1. Սուլթան Համալ .
2. Սուլթան Պէյազիտ .

Դասեր եւ նորագութիւնք ձրի .

Կատարեալ երաթաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

ՇԱՐՋԱՅԻ
ՄԱՍՆԱՎՎՃԱՌՈՒՄՆԵՐ

Արդէն հրատարակուած է

1903 ՏԱՐԻՈՅ

Ե. ՄԱՏԹԵՕՍԻԱՆ

Յ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Բ Ը

(AGENDA INTERNATIONAL)

(H. MATTEOSIAN)

Թուրքերէն, Հայերէն, Ֆրանսերէն եւ Յունարէն լեզուներով

Նախորդ տարիներէն աւելի ճօխ և աւելի խնամով պատրաստուած

Պարզ լսարկազմ	3	Մշ.	{ 25 օրինակէն աւելի գնողներուն զոնացուցիչ գեղջ :
Ընթիւ լսարկազմ	5	»	
ՈՍԿԵԶՈՄ ՓԱՌԱԿԱԶՄԸ	8	»	

Կը խնդրուի գաւառի պատուարժան յանախորդներէն որ հասին իրենց յանձնարարութիւնները կանուխէն քնել՝ Յուշատետքերը ժամանակին ձեռներէն ունենալու համար : Իմել Հրատարակչին ,

Յ. ՄԱՏԹԵՕՍԻԱՆ, ՊԱՅՊԼ ՀԱՌԻԶ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի Ի Ն Ի Յ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻԶ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ԶԻՒՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ շէնք	240,000,000 ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000 »
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՅ ԶԻՒՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ շէնք	99,000,000 ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց դրամային հետ կը համեմատուի 60% — ինչ որ «Ինքիօն»ի ապահովագրելոյ կ'ընծայի հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԵ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼԻՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈՎ :

Արեւելիքի համար մասնաւոր սակացոյց գեղչեալ գիներով : Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները : Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում , որով Ինքիօնի ապահովագրողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսալաբութիւններէն , որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք , որ շահաբաժիններու բաւոյման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրուքեամբ զորոքող ընկերութեանց կ'ապահովուիր :

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԳԱՆ
Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս , Կալարա , Թահապուրուն խան , Օսմ. Պանգային դիւանք
Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ